

Italoթի եւ Vnlgataթի սովորական բացատրութիւնը չեն գործածուիր: Այս բանն ցուցուցած է արդէն Յան առաջին անգամ գտնուածին համար: Նոյնը կ'արժէ երկրորդին համար ալ, միայն այն եղանակաւորութեամբ որ թարգմանիչը չէր Ասորի մը, այլ լատինագէտ եւ ասորերէնագէտ Յոյն մը կամ Ասորի մ'որ աւելի հմուտ էր յունարէնի քան լատիներէնի:

Յան այն երթագրութիւնը կը յայտնէ թէ արեւմուտք բնակող բազմաթիւ Ասորիներն մին էր, որ թղթակցութեանն թարգմանութեամբ ուզած է գոհացընել լատինացւոյ հետաքրքրութիւնն, զորոնք մտադիր ընել տուած էր յիշեալ գրութեան վրայ:

Թարգմանութեան տարին այնչափ միայն կրնայ որոշուիլ որ Ե դարէն աւելի ուշ չէր կրնար ըլլալ: Վասն զի յամենայն դէպս Ե դարուն սկիզբն անվաւեր թուղթն գուրս հանուած էր ասորի Աստուածայնէն:

(Վերջը Գաւաթ)



Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ՅՈՒՐԻ ՍՈՐԳԻՍ

(Տօնի նկարագիր. խոսակցութիւններ Անալքալաքի բարբառով):

Տէր հայր, ժամի վախտ է, քելէ ժամ ըսէ, ասաց զայսում խմբուած գիւղացի երիտասարդներէց մին՝ գառնալով քահանային:

— Օրհնած, ի՞նչ եղաւ, քեզի, քիչ-մ'ապստէ, հըն յետինք ա չէ եղէ: «Սպասեմ, հըմբ փորս վեց-վեց կ'ենէ, օրը ժուժ-մ' հացով մարդ կրն՞ զիրլիկ ենէ, ան ա՛, բողի, աւելուկ, զմի, բանջար ես մախոն ապուր. կարգին բան ա ըլլէ դուրեար:»

— Այ ցաւս ըլլի, բարկանալով ասաց մի ծերունի, հըրդ ես ի՞նչ ենեմ օր, էխախար հալով օրը մէ անէկ հացով-մ' եօլա կ'երթամ:

— Հըրդ քրիստոնեական աշխէք, Սուրբ Սարգսին խաթեր հմար, մեռնիմ սուրբ զօրութեանը, օրը մէ հացով չէ, մէ քիշմիշով ես եօլա կ'երթամ, ալայը հինգ օր չէ, ինչ է օր. ասաց մի երիտասարդ:

— Ան կիտի աղջկներ, բացականչեց քահանան. վախտ ա զայ՝ չէք հաւնի, սաղ հինգ օրով ծած բռնող կայ, ախա մեր Գալոյնեց չերիք-նաղը ասօր հինգ օր է օր բերանը նշխարը չէ դրէ:

— Հըրդ ան ա ճեղք է ընիկ, անէն չի կրն՞ զուս զայ:

— Զընքը բնիկեւուն մի աշէ, անոր հաւտին աշէ, կրկնեց քահանան, դու օր. ըսու անծառ Սուրբ Սարգսին խաթեր հմար շատնջէս, հեչ անիկ

կ'ողորմենայ քեզի: Դրու՞մ պան պիտի պահես օր՝ նեղն ընեմք վախտտ էանալիտ հասնի:

— Խաղաղ շարժով կ'առնենք, տէր հայր, ասաց Թորոս ասին, հրամանող ըսածին պէս՝ մարդուն մէկը Սուրբ Սարգսին ծածը անուտը բռնէ կը. կ'ըլլի կ'օր ատոնից տուէր հիւանդ. կ'ըլլի, շատ գիծերնայ կը, հոգու կոծուէն աս մարդը կէս զի-շերին կ'ըլլէ կ'երթայ կ'օր անբարե կանչէ հիւն. դին ճաշակ տայ: Իրենց գեղին ա տէրտէր չէ եղէ, էրթայ պիտի մեկալ գեղէն բերէ: Կ'երթայ. ծածկ փան՝ իրեն դարար իրեն հերիք չէ՝ գալեին ա վըսլ թափին փաթթեան կը ատոր: Խեղճ մարդը չի գիտնայ թէ ինչ ենէ, չախում ա չէ ունեցէ օր՝ մօտիկ էկողին փարը խրէ: Ես՝ Սուրբ Սարգիս, զօրութեանտ մեռնիմ, դու խմտախոս հասնի. կ'ընէ կ'ու երեսը խաչ կը հանէ: Մե՛ւմ ա կ'աշէ՛ մե զը՛ս ձիաւոր-մ' էկաւ ու մըրթիով ատոնց հեռեւ-ցուց: Ատոնք փախան ու ամէն մէկը ծամփին մէ զրադը պըպան: Գըռ ձիաւորն ա զոյսն անցաւ (անհետացաւ): Աս մարդը անաշխատութիւն (անվտանգ) գնաց գեղ հասաւ, տէրտէրին ձէն տուեց, ու ա-ղաչեց օր զայ՝ հիւնդդին ճաշակ տայ:

— Ծամփանահ չըլլի, հարցնէ կը տէրտէրը:

— Չէ, տէրտէր շան, բան չկայ, կ'ընէ աս մարդը, վախենայ կը թէ՛ ծամփան եղածը պատմէ՝ չըգայ: Կ'ըլլէ կու գան. կու գան էաւալբուայ (առաջուայ) տեղն օր հասնին կը՝ տէրտէրը կ'աշէ օր ծամփին բուսիքը գալեը պըպեր էն. թուքը կը շարնայ: Քիչ-մ' կը կենան, կ'աշեն օր՝ նէս կ'օռնան նէս վրայ կու գան: Գողզղալէն քիչ-մ' առաջ կ'երթան, կ'աշեն օր ատորք ժած բիւս չեն զայ, սիրտ կ'անան, սիրտով կ'ընեն օր քար էն: Ատ վախտը ատ մարդը պատմէ կը թէ՛ր ատորք գալ էին, իրեն օր փաթթեցին, Սուրբ Սարգիսը օգնութան կանչեց, ան ա էկաւ, ատոնց ատուղ զար գործուց: Ատ քարերը տէլ մ'օր հինի ա կեցած էն:

— Ը, անոր սուրբ զօրութեանը մեռնիմ, մեա-կէար առպէս հրաշքներ է ցուց տուէ, — ասաց մի ուրիշ ծերունի եւ ուզում էր ինքն էլ մի բան պատմել, սակայն գանգալները զարկին, պէտք էր եկեղեցի գնալ: Ժամանիկն անօթութիւնն որ սաստկացել էր՝ գնացել գանգերը զարկել էր:

Դեռ ժամիկը գանգահարութիւնը չէր վեր-ջացել: Գեղի բուր ժողովուրդը եկեղեցի թա-փուեցաւ:

Զանապարհին գրէթէ բուրը պըծնում էին իրենց մաքրելու ք. քամուն տալիս, որպէս զի Սուրբ Սարգիսն իրենց շուռն ու ցաւը սպաւ-մազերի հետ տանի:

Ժամանացութիւնն սկսաւ. եկեղեցին լի էր ամէն հասակի եւ սեռի մարդկանցով, աղջկները կանաչը յետեւը խմբուած էին եւ աստիկ ջերմե-նանդութեամբ աղմուծում էին:

Ջերմեւանդութեան կողմից երիտասարդ-ներն էլ աղջկները պակաս չէին, եւ բոլորն էլ մոտածում էին «Եղծայ խոնցէն վէր ինձի ջուր պիտի տայ, իսկ աղջկներն հայեացքը ուղղել էին Սուրբ Սարգիս պատկերին, որի շուրջը վառ-

¹ Zahn, Geschichte des neutest. Kanons, II, 1018, եւ Theol. Literaturblatt 1898, Nr. 17.

² Ճիւղ. Եւրի հետաքրքրական յօդուածն Արեւ-մուի մէջ եղած սուրբ գաղթականութեան վրայ Պատմ. Կանոնի Կարգաւ. Ա 1888, էջ 415 և 416:

ւում էին բազմաթիւ մոմեր, սիրոյ բոյցեր ցլաց-
նելով աչքերի եւ սրտերի մէջ:

Ժամանացութիւնը աստուուեց, ծերունե-
ներն ու պատանեակներ շուտով գուռս ելան, իսկ
երիտասարդներն ու աղջիկները գնացին եւ իրենց
սիրածն շրջապահներով համարաւորեցին Սուրբ
Սարգսի պատկերը:

Ժողովուրդը ցրուեց տները եւ նստաւ հացի:
Նորափթիթ աղջիկներն ու երիտասարդները միայն
աղի դմ կէրան, եւ աղի կլիկն էլ ծոցերը դրին,
որ քնելիս ուտեն, իսկ միւսները իրենց սովորական
ընթերցելու արին:

— Ապա, կերակուրն ինչք է հում, գան-
գատուում էին շատերը:

— Օղու, ի՞նչ էնեմ, խաչերկաթը չենք
դնէ օր՝ կերակուրը վառ գնեցը կարգին էփի:

— Խաչերկաթն ինչք չես դնէ, հարցնում
էին փոքրերը:

— Աս հինգ օրը չենք դնէ՝ օր գառները
չխելուին, բացատրում էին մայրերը: Հապիւ թէ
հաց կերան պրծան՝ պատառ ապլաները դիտաւ օր
գառն յետեւը գրին մի սկաւառի եւ շարմաղով
փոխելով շարմաղեցին: շորս կողմն էլ շորս վառած
մոմ՝ դրին: Հարսներն ու աղջիկները փաթթեցին
էին ապլայի շուրջը, բոլորն էլ գիտէին որ այս
երեկոյ Սուրբ Սարգիսը պիտի ման գար, այդ
դուռն էր, որ ի՞նչ իրենց տուրք մտնէ, իսկ
հետքերը մնալով՝ խնայային: Երբ փոխիւղը պատ-
րաստեցին՝ ապլաները հրաման տուին հարսներին
եւ աղջիկներին որ երթան քնեմ:

Աղջիկներն ու տղաները հէնց որ մահճի
մտան, իսկոյն կերան աղի կլիկները, մի քանի
աօթեր շնչեցին ու պատկեցան: Ոմանք հանդիսու
անխառով խոփում էին, իսկ ուրիշները անուրջներով
յափառակաւած մերթ ժպտում եւ մերթ տխու-
րեան տուներով լողալուում էին: Վէս ժամից
քնած էին բոլորը: քնած էին Ախաբալաբի բոլոր
գիւղերն ու քաղաքը: քնած էին յորդահոս գե-
տերն ու ականակիտ վտակները: քնած էին բար-
ձրաբեր լեռներն ու անգիգախոր ձորերը, քնած
էին հեղիկ լուսինն ու պաղպաղուն աստղերը: Մի
խօսքով քնած էր ամբողջ բնութիւնը: Դեմած չէր
միայն մինը: — Ս. Սարգիս, Հազարաւոր խնդիր-
ներ եր հասել նրան, հազարաւոր սրտեր ապաստե-
մ են նրան: Նա պիտի հաղթի բոլորին էլ: Նա
պիտի կատարի բոլորն էլ խնդիրը: եւ ասա
թէ ինչու՝ այդ մոլէթ դիրքին, երբ աչք
աչքի չի տեսնում, այդ քնի եւ հանգստի ժամա-
նակ, երբ ամենայն ինչ ծաղաւանում է, նա իւր
՛ղբւմ էին նստած գնում է, ձր: — միտցնելու
այն երկու եւակները, որոնք միմեկին համար են
ստեղծուած եւ որոնք միասին միայն կարող են մի
ամբողջութիւն կազմել եւ երանիկ լինել: գնում
է միացնելու այն սրտերը՝ որոնք շանթախիկը անպերի
նման միմեկանց ձգում են: գնում է աւելի ուսում
եւ յուսահատ հոգիները սիրոյ կայանք հանգչե-
ցնելու: Իսկ այս գազափարը այնքան օգէւորում
է նրան, որ մերձիկը ձեռքին, ու ճափաբը դրան՝
խաղացնում է իւր դուռնին: Ժնշում է ձին եւ
սարքը ձորեր մի վայրկեանում չափում: Նրա պրն-

չերից ամպեր են ցայտում եւ փաթիլ փաթիլ
ձին անում, նրա ստների արօթիկներից աշխարհ
է թնդում, իսկ մըլիի խաղացնելուց սաստիկ
բուք բարձրանում: Զափ է ընկնում ձին Ջրէի
ինդարակ գաղաղապարտ, բայց յանկարծ ոտը
սայթալքում է եւ քիչ է մնում, որ վեր ընկի:

“Ախ, անիծուածները, ասում է Սուրբը
“սաղան են գործածել, որ ձիս սայթալքում է դ
եւ կրկին շրում: Թուշում է ձին եւ մտնում
Վաչեանին, մէկ էլ յանկարծ ձին յամբանում է,
նայում է Սուրբ Սարգիս եւ տեսնում, որ ձիու
ոտքը թնշուկ է փաթթուել:

— Այ, անիծած աղջիկ, այսօր որ չլու-
սիք մարդիկ չէր լինի, բարկաւայրով ասաց Ս.
Սարգիսը եւ մտաւ քիւրը, անցաւ մինի գնումով
տեսաւ փոխիւղը եւ գրուած են շորս մոմ վառու-
մն, անցաւ փոխիւղի վերայով եւ մտաւ տունը:

Թողարկում ցնցոտիներով փաթթուած
քնած էր մինը: Նրա փոքրիկ դուռից անհո-
գութեամբ վայր էր գրուած պատառառուած բարձի
վերայ, երկար սեւ մազերը ծածկել էին ամբողջ ուտը
եւ դեռ սարածուել անկողնուց դուրս: սեւ ուն-
քերը կամար էին կապել նրա աչերի վերեւ:

Սուրբ Սարգիսը կանգնեց այս շքեղ անձին
առջև, բարկացած բարձրացրեց մկալիւրը եւ ուզում
էր խրել նրա կուրծքը, երբ հայեացքը ընկաւ
երեսին:

Գեղեցկութիւնը ազգեց եւ Ս. Սարգիս
վրայ: Նա ակամայից ի՞նչքեց մզախը եւ արթն-
նացնելով նրան ասաց:

— Հուռտով հանքի ձիուս ստներից թնշու-
կը, թէ չէ՝ մուշկ երկինքը էր հանեմ: Աղջիկը վեր
թռաւ անկողնից, քնաթաթին անգաղապար
ձեռքերը ձգեց դէպի Ս. Սարգիս ձին եւ հանեց
թնշուկը: որ յուսահացել էր իւր դուռն լուսնայնուց:
Ս. Սարգիսը ձին յետ դարձեց, թողնելով աղջ-
կան մտառանելութեան մէջ:

Այժմ պատարեւն քշեց ձին դէպի Գիւմուր-
դու գաղաղապարտ: այստեղ պատահեց նրան մի
լուր: որ շատուով դէպի նազաղապարտ էր իջնում:
Ս. Սարգիսը ձին խաղացնում էր, բուքը քանի գնում
սաստկանում: “Ս. Սարգիս, ձեռքերիս հաս-
տութեամբ մի զոյգ ժող առաջիկ կ'վառում, ինձ
մի խնդիր, աղաչեմ լուրդը, որդոց, ընտանիքի
սէր եմ: Ս. Սարգիսը լուրը դրան եւ ձին աս-
պատակելով անցաւ դռանի մի ծայրից միւս
ծայրը: Մտաւ Գանձաւ, անցաւ Սկրտկինց փո-
խիւղի վայրով, ձին էլ փոքր ինչ թրքեց եւ ուղ-
ղուեցաւ դէպի Գուգա:

Մտնելու մի փոխային. այստեղ աւելի
աշխուժով սկսեց խաղացնել ձին: Գիշերուայ կի-
սին շուպիւղի մի մուտքած յայն իւր կամակորու-
թեամբ ուղում էր յայտնել Ս. Սարգիսին եւ Գան-
ձայից Գուգա դալ: Սրան որ տեսաւ Ս. Սարգիսը,
սաստիկ վզաւովեցաւ, յիշեց այդ ազգի կամակորու-
թիւնը ու անպատահաւորութիւնը: ձին վայր չէց
եւ խնայեց խնայեց ձիւնի մէջ: Ինքը անցաւ
Գուգա: Վէս ժամից Գուգայի ամբողջ գաղաղապարտ
ծածկուեցաւ երկու օրվն ձինով, գետնափոր

տներէ դռներն ու հերթիկները ծածկուեցան ձիւնի հաստ շերտերով:

Ս. Սարգիսը շըլեց ամբողջ դաւառը. յետոյ մտածեց որ հապարուստ պապական շրթուղիներ իրեն են սպասում. ուստի անօրինեց, թէ թով ում էր սոյ սոյ եւ ինքը գնաց մի քիչ հանգստանալու:

Լուսացաւ. Ս. Սարգիսը դարձանով ձին հեծաւ եւ գիծաւորեց արեւին. «— սաստիկ բուքը կրկին սկսաւ:

Վերկացան տանտիկներնը աղօթք մըմնալով գնացին դէպի գուռը, եւ ուշի ուշով նայեցին փոխադին, որ տեսնեն թէ Սարգ Սարգին իրենց տունը շնորհք բերել է: Երբ տեսան որ ոչ մի հետք չի երեւում, վերցրին փոխիզը, որ զբանով խաշել ետին. այդ օրը միայն այդ կերակուրը պիտի ուտէին: Ետոյ բացին դռները, եւ տեսնելով երկու արջնաշափ ձիւնը, «Մեռնիմ» սուրբ շնորհքին, կենա շնորհքը ցուց եւ տուէ՛, ասացին. որպէս կանչեցին, որ ձիւնը յետ տան եւ ճանապարհ բանան: Մինչդեռ, տղամարդիկ ճանապարհ կը բանային, տանտիկներնը վառեցին թոնրիները, սակայն շարունակող սաստիկ բուքը շնորհք ծուրը դուրս գալու, ամբողջ տունը ծխով լցուեց, Գրսից բուքը քանդկանց ներս եւ քլում. ներսից ծուրը՝ դուրս: Այ մի տեղ էլ չէ կարող մնալ, անճարացած՝ թափուեցան բակը եւ ծուրի, բուքի սահմանում պղզեցան: Սակայն շուտով այստեղ եւս հասաւ ծուրը: Այս տղոցնից գործն էլ գուրս կեաւ բակից եւ գուրսը մի անկիւնում պղզեց, աւելի լաւ համարելով մի թշնամուց հայաճուրիքն երկուսից:

Քահանան դուրս ու ներս անելով անիծում էր ժամանային, որ ուշացաւ չեկաւ, գնային եկեղեցի: Այդ օրը պատարագ ունէին: Երբ քահանայի համբերութիւնը հասաւ, որդիներէրց մինքն ուղարկեց կանչելու: Արդին դարձաւ՝ թէ ձիւնը բոլորովին ծածկել է գուռը եւ անեցիկ բուքը տանը բանադրուած են. փոքրերը լալա են, իսկ մեծերը անիծում իրենց բախար:

— Մենեակ խոզէ ժամուրը չէ, որ խափանմիշ է եղէ. Գալոյնեց, Թորոյնեց, Կուզկուզեց, Իշի լուսենց, հը բանիմ հատ ա ուրիշ դռներ թիփին լեցն դափառմով է երէ, ասաց քահանայի որդին:

— Ի՞նչ պտի եննը, հարցրեց քահանան:

— Հէ՛լ ինչ, մնան կը, թիփին կ'իտուի կ'երթանք գեղովի ձուրը յետ կու տանք՝ դռները բանանք կը:

— Ինչի՞քիմ շարթմ մ յետ շառաւ թիփին, խեղճերը անհաց, մալերը անգարման, ք'նչ պիտի եննը, հարցրէ ես:

— Տիրացու, դուռը բանան, ձուրը տանին հալէ՛ խմն կը. հացն ա գրկները տանին հերթին վար կախն կը. քանդուի, յերկիր է. անմէն տարի մըր հալը սա է. դափանովը կ'լլկնը (կը փախկոնը) աներուս մէջ մնանք կը, անհրուս կրննը դուս էլլէ. հերու Մայիսին խափրենց Թարուս Գանձայէն Փոս եկած վարթը թիփեցէն խեղդուաւ, իրեք տարի առաջ ա Գիրազի (Յունիսի)

կիսուն Մածիկանցի Տիտիկայի օշորները թիփուց խեղդան կենա մեր օրնուին մէջը:

— Դո՛ժ ծօ, զնգ՛ հատեց տերտերը, առ առաւանք մե՛-մ ա վազէ՛ ժամուրին հերթիկէն վար կախէ, բարինքն առ էկէ, էալիզ օր է, ժամ պատարագէ էլ է՛. չ'գրկուիք: Կ'ուզեմ քանիմ հատ ա հայն առ ար:

Արդին տորնէնլով հնազանդեցաւ. բայանին բերուեցաւ եւ մինչեւ ի ծուկը ձենա մէջ խրուելով՝ գնացիցը եկեղեցի:

Զնայելով որ սարսափելի բուք էր, այնուամենայնիւ շըմուռանդ ժողովուրդը լցուեցաւ եկեղեցի: Դո՛ժ պահողներէրց շատերը, մանաւանդ օրորողներն ու երիտասարդները հաղորդուեցան: Թամասաշտովիւնն որ աւարտուեցաւ, Մոռիկենց Տեփանը կեկեղեցու դռնում հրաւիրեց ժամուս որներին իւր տուն՝ հոգուհաց ուտելու, որովհետեւ այդ օրուս պատարագը ինքն էր՝ «առեւ», Գիրազի իշխանները, որպէս կրկին ու կրկին հրաւիրուեցին, միջանի էլ աղքատ ծերունի՝ գնացին հոգու հաց ուտելու, միւսները ցրուեցան տները: Մինչ դեռ բուքը վրայ բեկած հոգու հացն էին սւտում, ամբողջ երեսը կակաւ դարձած, ձեռքերը փշելով եւ ոտները գոտին խփելով մինը տունը բեկաւ:

— Իննէկ ձեզի, նստեք հաց կ'ուտեն. մաղ մնաց օր խեղդուէի, ասաց: Օրջնեա՛ տեր, բարի լուս, աւելաւորք՝ տեսնելով քահանային եւ հաւաքանած իշխաններին: Եկաղը Գանձայի էր եւ հարուստ մարդ, ուստի խփոյն հրաւիրեցին նրան «օճիկ գլուխը» որ թէ առաջանայ եւ թէ կ'առանայ: Մէկ մէկ բարեւելոց յետ՝ «ճամփեքն ք'նըզ է՛» հարցրին այս ու այն կողմից:

— Դամմու հէ՛լ իզ չի երեւայ, երկու արշնէն աւել ձուրը լցուեք եւ անմէն տեղ, իրեք սշաթ է էլէր էմ, խափն ընկնելէն, ինդին ընկնելէն անճախ կրցանք դայ հանին: Լաւ էր՝ էլի Սարգ Սարգին մեզի մեր լաւ հաւաքն բաշխեց, թը չը՝ Ռուսին պէս խեղդուէի պտի:

— Ինչք Ռուսում:

— Հնչպի, մէ Ռուսում՝ ճամփան խեղդուեք վար է բնի:

— Զաթի պիտի խեղդիր ու խեղդիր: Աս անօրէններէն անմէն տարի Սարգ Սարգիւր մէկը խեղդէ կը:

— Ինչի՞, հարցրէ ես:

«Նորը հմար օր՝ սա անօրէններն անոր պար չեն պահէ, ունենան չունենան պտի ուտեն: Թագաւորին մեկը՝ մէ Ռուսում շատ զօռէ կը թը՝ Սարգ Սարգին պար բանէ, տեսնի կ'օր յանկած չի ետէ՛ցիկ կու տայ կը նապախտն (բանա) ու հրամայէ կ'օր ուտիտուայ հէ՛լ բան շտան: Աս օրս հանել կու տայ նապախտէ՛ կանչէ կը քովը, կ'ըսէ՝ «Տեսար, շէիր պահէ պարը, ինչը պահել տուէն:

— Զարբնեւրուս աշէ՛ ետեւ խափ, կ'ըսէ Ռուսում:

Թագաւորը կ'աշէ օր պար ուտելու հմար էն անիծածը շարիններն էր կրէ: Հար ա տար հմար է օր Սարգ Սարգին անմէն տարի մէ Ռուսում՝ խեղդէ կը:

— Տի՛ղն է, վրայ բերին շատերը:

— 2եր գեղն էլ Սուրբ Սարգիս սնցէր է փոխնդի վրայէն, Տարցրեց Գանձացին։

— 2է, մեղք տանիկ (արժանի) չէիրք։

— Հուլիմ օր, Փակացիքը իս Գանձացոյցս չը պրան Տաւարիքը, Սուրբ Սարգիսը, մեռնիմ սուրբ զորքին, անցեր է Սէյրակենց փոխնդի վրայէն, մին աքիւղ՝ թրքեր էր. աշխարհք էսոնց էին տուէ. էսօր խաչիլ էին ելէ. թրքն ա մանեհ Տէտր խաւանէ, ու իշինները, ուղէ բարեկըմ ները կանչեցին կերցուցին։

Քաշանան, Գր բերանը սրել յետ էր հոտել, որովհետեւ էլ բան չկար ուտելու, անհամբեր սպասում էր խոսակցութեան վերջնալուծն իսկոյն վերկացաւ. եւ «Տգուցն» սկսեց։

Հաղիւ Հայր մեր վերջադին, ամեն շտապ շտապ՝ Աստուած բնդունելի էնէ, Սուրբ Տոգին միւրթարէ, ասացին եւ ջրուեցան տները։

Բուքը կտրել էր, արեւը բարձրացել էր. կնակամարի վրայ եւ իւր թոյլ ճառագայթները ստեղծ ձկնապատ դաշտերի վրայ։ Գնէւ ջրաբոր սաստիկ էր, բայց եւ այնպէս՝ յայտնի է որ սէրը ոչ ցրտից է վախենում եւ ոչ կրակից։ Քանի բան ինկեր գիշերը իրենց բարձի տակ դրած բուլունձները դրել էին կտուրէ, եւ սպասում էր թռչունները գան տանին, եւ որ կողմ որ տանէին՝ այն կողմից պիտի գար ոպատուածը։

Ա՜յս մի ագաւաւ եկաւ եւ Քալոյենց Մկոյի բուլունձ տաւա, թաւա իջաւ տանուտիրով էր. գիկն, ու այնտեղ կերաւ։

Աշխարհք Մկոյին տուին. էլ չգիտէր ինչ անէր, քիչ բան էր, տանուտիրով փեսայ պիտի լինէր։ Ուստի առանց ժամանակ կորցնելու, վաղցի մօր մօտ, եւ ստիպում էր որ խնամխոսութեան ուղարկի։

Մի ուրիշ ագաւաւ էլ՝ եկաւ եւ Գողգորենց Վարդունի բուլունձն առաւ ու թռաւ Թաւա դէպ ի արեւելք եւ գուրս եկաւ գիւղից, անհետացաւ աչքից։

— Վայ, վայ, ասաց Վարդուն, իմ գլխատէրս իս դէն պիտի գայ. վէ՛լ գիտէ վէ՛ր գեղէն. եւ յուսով համբերեց։ — Սրա մեղքը իրենց զիդայիկները շատերը ինդրեցին, սալայն սա մերժեց, սպասելով արեւելքից գալուք փեսացոյին, իւր ճակարդ գրածին. տակալի նա դեռ չէ երևեացել։

Ա՜յս ուրիշ ագաւաւ էլ եկաւ եւ Տեփանենց Հերիքնաղի բուլունձն առաւ տարաւ եւ մի գերեզմանի քարի վրայ դրեց. կերաւ։ Խեղճ աղջիկը այս օր տեսաւ զանասուեց. «գերեզմնի հետ պոտի պտտիւրիմ» ասաց, եւ արցունքը թափելով մոռա տուէ։ Ընկերներն աշխատում էին միւրթարել նրան եւ ապացույցանել իջ այդ գուռակութիւնը սուս է, սակայն ինչպէս կարող էին այդ անել, քանի որ իրենք էլ խոր համոզում էին դրանում։ Միայն առատ արցունքը մնում էր միւրթարութիւն Հերիքնաղին, սր միշտ միայնութեան մէջ թափում էր։

Այսպէս երկար բոլոր գիւղերի երեսասարգներն ու աղջկներն այն ցրտին երգիկները կան

զնած՝ Թռչունների թռչնալուք գուռակում էին իրենց ապաւաւն։

Արեւ խմորհեցու վրայ էր. բուքը կտրել, եւ գիւղի տղամարդիկը չիք ճանապարհը բացել էին, ուստի երիտասարդներն ու աղջկները ցած իջան կտուրներից եւ քուլաներն առան գնացին չուրը։

— Ըջիկ Հերիքնաղ, կանչեց միւր իւր նմաններին, կեցի, կեցի իւրս հետ էրթանք։ Հերիքնաղը սպասեց եւ նրանք բնկերացան։

— Ըջիկ, գիշերս քեզի չուր տուէ՞ն, հարցրեց Անիկը։

— Քեզի տուէ՞ն, ինքն էլ հարցրեց Հերիքնաղը՝ պատասխանելու տեղ։

— Հըլը գո բոս ետեւ ա ես կ'ըսեմ, պիղեց Անիկը։

— 2է, առաջ դու բոս։

— Ինչի, դու բոս։

Այսպէս երկար իրար ձգելուց յետ՝ վերջապէս Անիկը ասաց։

«Գիտնա, Հերիքնաղ, դիշերստնուշ քնած էի, մեծ ապաւեմ, Մկոյենց թարափէն մէ բռնտիկողաւմ, կլապիտուն չուխան հաղը զանդները ոտքը փափախն ա ծուռ դրած էկաւ քովս, մեռքի՛ օսկի թատով չուրը ինձի երկնցուց, «առ, խմ բոսաց, ես քեզի թողնեմ՝ կ'օր ծարաւ մնաւ, ջուրն առայ, կուշում խմեցի, տուի իրեն թարս։

— Երեւի քեզի, ալ ինչ կ'ուզես, Մկոյենց թարափներն մէ տղաւմ պիտի տանէ քեզի, չուրքի օր՝ առ տղան Մկոյենց թարափներէն կ'ըսես էկաւ, մեռքի թատն ա օսկեցէ որ կ'ըսես. չըսեմ՝ օսկու արծժիթի մէջ պոթ կորիւս։ Հըմը դու ան բար թը թարս լիքն էր։

— 2է, կիսեմ հետ անձան կ'ըլլէր։

— Վյ, իսեղ Անիկ, ապաւաւ կ'ըսեր կը թը, թատն որ կիտաւ ըլլէ, իւրս հետ յերկար չեն ապրի, թէ՛ղ մեռնին կը։ Անիկը այս խօսքի վրայ տիրեց։

— Հըմը վէ՛լ գիտէ, պառւերներ էն, տուս ու զորդ գուս կու տան, ինչի պրտի ապաւաւ ըլլի, ասաց Հերիքնաղը կամենալով միւրթարել նրան։ Այսպիսի խօսելով նրանք հասան աղբիւրին։ Մաքուր եւ պարզ չուրը միւրթնակ կարկաշով վաղու՛մ էր նաւի միջով, նրա չուրը հաւաքուած էին նորասեր ջրուորներ, որ երկար խօսում եւ հաղորդում էին միմեանց այդ օրւայ ապաւորութիւնները։ Աղբիւրն, փերիներն այդ բնակավայրը, մարդ փերիների ու երեսասարգների տեսակցութեան ու ժամագրութեան տեղին է. այլ տեղ վաղ արշալուօսին եւ ուշ՝ վերջնալուսին՝ Ալուսաւորքի գառները, փափսում են միմեանց իրենց սրտի գաղտնիքները։

Ծ. ԱՆՍԵՆՈՐ

